



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 օգոստոսի 2016 թվականի N 790 - Ա

ԵՐԵՎԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 2798-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ  
«ԷՐԵՐՈՒՆԻ-ԵՐԵՎԱՆ» ՏՈՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ  
Մ Ա Ս Ի Ն

---

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174Ն հրամանագրով սահմանված կարգի 5-րդ կետը և Երևանի քաղաքապետի առաջարկությունը՝

1. Երևանի հիմնադրման 2798-ամյակին նվիրված «Էրերունի-Երևան» տոնական միջոցառումները կազմակերպել և իրականացնել 2016 թվականի հոկտեմբերի 8-ին:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված միջոցառումները պատշաճ կարգով կազմակերպելու նպատակով՝

1) Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարին՝ Երևանի քաղաքապետի կողմից ներկայացված տոնական միջոցառումների ծրագրին համապատասխան աջակցել մշակութային միջոցառումների իրականացմանը.

2) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարին՝ ապահովել էլեկտրաէներգիայի անխափան մատակարարումը միջոցառումների անցկացման վայրերում.

3) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապե-

տության ոստիկանության պետին՝ միջոցառումների ընթացքում ապահովել դրանց անցկացման անվտանգությունն ու հասարակական կարգի պահպանությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

2016 թ. օգոստոսի 31  
Երևան



Հ. ԱՐԲԱՀԱՄՅԱՆ